



## 15. ԾԵՆԸ ՎՃՐԹԱԿԱՌԻ ԿԱՊԱԾ ԸՆԾԸԿԱՆԸ ՆԱՂԱԾ

Մին մարթ, մինդյել մին կնեգյ ա ինում: Տահանց ինում ա մին տղա, մինդյել մին ախճիգյ: Ախճիգյը հալա ուրուրուցումը, մարք վըեր տանում ա, թա թուրունն էրի, հաց թխըն, եր ա կենում պոնկերը լոխ օտում, էլլա նի մնում ուրուրուցը: Վըեր մինըն մըծանում ա, շենումը հիշքան մարթ, հեյվան, շոն, կատու վա ինում, լոխ օտում ա, հորն ան մորն էլ օտում, սազ շենումը թողում մին վըերցակ, հանցու վըեր օրիշ տըեղա մարթ-պին կյալիս վախտը կանչի, դուկուզ անըն, մին շոն, հանցու վըեր հըշիլավ դուկուզ անըն, մինդյել մին դամնիրչի, հանցու վըեր կըռքընընիս արըն:

Հալա մինչև հորը նան մորը օտըելը էտ ախճիգյը օզում ա ախպորն օտըն, մին դուզ տիյերան դուկուզ ա անում, վըեր քու քուր քյեցալ ա կըռքընընն սըրն, կյա քիզ օտըն, ճելլ ըրա փախն, կլժիստ ըզադե:

Էտ տղան փախնում ա, քյինամ մին հեռու տըեղ, տըեսնում մին քըերծու դաթում մին կարան տըեղ էրկու քոռ պառավ էծերը քթած, կաթնը մին ըմանում փրթած, օտում ըն: Թաքուն քյինամ ա տահանց կոչշը, կովսկըրնըներնն նստում, ըսկում նհըտնընն օտըելը: Վըեր պըրծնում ըն, մարթն ընդըեղան ա ասում.—Ա՛ կնեգյ, ախեր քուշտացըն վուզ, կնեգյն էլ ընդըեղան ա ասում.—Ա՛ մարթ, ախեր իսկի ես էլ լի քուշտացըն:

Մին քանի օր վըեր էտ տղան տահանց նհըետ թագում օտում  
ա, տահանք միշտ մնամ ին սոված, մին օր էլ մարթը թա՝ ա՛  
կնեղի, հենց ա մըսի քշտին օրիշ մարթ էլ ինի՝ մըզնհըետ ուտըե-  
լիս, թա չէ, սոված շընք մնալ, եթ ծըռքընըես ուրուր անա-  
փոնենքյ, տըփտըփենքյ, քթենանք Ուրուր ծըռքը փոնում ըն,  
դալ անում, տըփտըփելավ էտ տղըեն քթեննում, հըցնում, թա՝  
տու հինչ իլլրթ-մի՛լաթ ըս, ըստըեղ հինչ օնըե՞ս: Էտ տղան թա՝  
ևս էսհինչ շենան ըմ, ինձ իստի մին մըրթակեր քուր օնըեմ, շենին-  
կեսը կերալ ա, ուղըեցալ ա ինձ էլ օտըն, փախալ ըմ: Տահանք  
թա՝ դի լավ, մըսի քշտին կաց, մունք կըտընոնանք քըզետե  
համ հար, համ մար, տու վըել տար էծերը պահը, հղըցըեն-  
ծախ ընդունան վըեր չի հընցնըես:

Էտ տղան ամմըեն օր տանում ա էծերը պահում, ուրժուգյունը  
պիրում տոն: Մին օր էլ վըեր էծերն առաջն ըրած տանում ա-  
հանդ, ասում ա.—էս հղըցըեն ծախ անգյունն անց ըմ կըննական,  
տըհսնամ ընդըեղ հի՞նչ կա, վըեր էս պըրըվնըեն ինդի լըն ասում:  
էծերը հղըցըեն տիյերն ա անում, ինքյն անց կենում էն անգյունը:

Մին խիլա վըեր քյինամ ա, եշում ա, տըխսնում մին հեռու  
տըեղա մին ծոխ ա պեցրանում, թուշը յոր ա օնում, քյինամ: Հըս-  
նում ա ըաշեղ, տըխսնում մին տոն, մաշին մին քանի սաղանեքը  
ըն ապրում: Էտ սաղանեքյը տրան փըռնում ըն, մին քանի օր  
պինըցնում: Մին օր էլ էտ տղըեն մին մըսծ փադ ըն տամ, թա՝  
կըտորի: Տա կացնավը վըեր ա թակում, օզում ա ճղըն, կարում չի.  
Սաղանոցն ասում ա.—Մըսպ չի կա, մին քանի սըեպ տումըեքի  
տինիմ փադին զաթումը, ճղըն: Սաղանեքյն էլ ասում ըն սըեպ  
չոնենքյ, լոխ կըհըվաթպինքյ ծըռքընըն: տինինքյ փադին զա-  
թումը, բիրադի ծիբյ տանք, ճղընքյ:

Սաղանեքյը լոխ հըվաթպում ըն, էտ տղան կացնավը փադին-  
թխում ա, մին մըսծ ճեղ ա պեց ինում, սաղանոցն ասում ա.—Դի,  
ծըռքընես բիրադի քցեցեքյ զաթը, ծիբյ տումըեքյ: ճղընցեքյ:  
Տահանք վըեր մըննըրնըեն քցում ըն փադին ճեղը, էտ տղան  
ծիբյ ա տամ, կացըենը փադին զաթան տում օնում, փադին ճղված  
տըեղը հոփ ա կլամ, սաղանոցը մննըրնըեն մնամ ա փադին զա-  
թումը, ուրանք էլ մըշկըրնըերան կռացած: Սաղանեքյը լոխ բի-  
րադի էտ տղըեն զալանք-պըրդատանք ըն անում, թա մըեզ ըզագի,  
հինչ լիվոթում ասըս, կանըենքյ:

Էտ տղան թա՝ ըսեցեքյ տըխսնամ էն պըրըվնըերեն աշկերը

Հիշտեղ ա, ծըեղ ըզադքեմ: Տահանք թա՝ էն ա էսհինչ ութաղքեն  
ուրուրուցըեն պերցին տակըեն:

Կացնավը թխում ա տահանց լոխճինին կլխընըեն կտորում,  
քյինամ պըռըվնըերեն աշկերը յոր օնում, սագանոցը իւթ-շիլածն  
էլ հըվագում, տանում: Պըռըվնըերեն աշկերը տանում ա քցնամ  
հնըանց տըեղը, լումըցնում, ետնան թա՝ քյիննական ըմ մըեր  
շենը, տըեսնամ իմ հար, իմ մար հուց ըն ապրում: Էտ տղըեն  
էլ էրկու լավ շոն ա ինոնմ, մինին անումը Զանգլի, մինինն էլ՝  
Զիրանգլի: Տա պըռըվնըերեն ասում ա.—Կաթնը տիրիք կրակըեն,  
թուղթեցերը կենա, վըեր պրտղեց, Զանգլին նան Զիրանգլին պեց  
կըթողեց, կլան:

Ինքը ծին նստում ա, հղըե ինոնմ, քյինամ: Վըեր հըսնում ա  
հնըանց շենը, եշում ա, տըեսնում մարթ, հելվան, հավ, շոն, կա-  
տու շի մնացալ, տու մի ասըել, քուրը լոխ կերալ ա, սադ շենումը  
թողալ մին վըերցակ, վըեր նոր մարթ յա օրիշ պեն կլալիս կանչի,  
դուկուղ անըե, մին շոն, վըեր հաշլի, դուկուղ անըե, մինգլի մին  
դամնիւրլի, վըեր կըռքընըեն սըրե:

Տանում ա ծին սընարան կապում, ինքը խուրչինը ծըեռքն  
օնում, պիցրանոնմ տոն: Քուրը վըեր ախպորը տըեսնում ա, շատ  
ա ուրխանում, կողավն ա ինգլամ, թա՝ վալ, ա ախպըեր, եկալ ը՛ս:  
Ախպըերը թա՝ հա՛: Թյինամ ա տուվլեր, ծիյին մին վըեննը  
պուկում օտում, կլամ թա՝ ա՛ ախպըեր, ծիտ իրեք վըեննանե յա՞  
եկալ: Ախպըերը վըեր արտեն գյիդացալ ա պենը հինչումն ա, ա-  
սում ա.—Հա՛: Մինգլի քյինամ ա ծիյին էն մին վըեննը պուկում  
օտում, կլամ թա՝ ա՛ ախպըեր, ծիտ էրկու վըեննանե յա՞ եկալ:  
Ախպըերը թա՝ հա՛: էն մինն էլ վըեր պուկում ա օտում, հըրց-  
նում թա՝ ծիտ մին վըեննանե յա՞ եկալ, ախպըերը էլլա յա ասում՝  
հա՛: Վերշին վըենն էլ վըեր պուկում ա օտում, ախպորն անա  
հըրցնում ա, թա՝ ծիտ առանց վըեններ ա՞ իլալ: Ախպըերը էլլա  
ասում ա՝ հա՛: Վերշ ծիյին մնացած ջամգակն ան կլոխն էլ ա  
լոխ օտում, ետնան կլամ ասում.—Ա՛ ախպըեր, դե, տու տանը  
կաց, ես քյինամ հըրվանան հաց փոխ օնըեմ պիրիմ, սոված կի-  
նիս, հանցու հաց օտըես:

Քուրը վըեր տանան տոնա ա կլամ, համին դուշը տիյերան  
ծեն ա տամ, թա՝ ա՛ տղա, քու քուր քյինաց կըռքընըեն սըրե,  
վըեր կլա քեզ օտըե, ճելլի ըստըեղաս փախըե, կըխըտ պրծըցըու

Էտ տղան շալվարը հանում ա, փոխկերը կըպտում, մոխ-  
րավ լըսնում հուրթան կախ տամ, ինքը փախնում: Քուրը կըռքը-  
նըեն սրած կլամ ա կլխըյեր եշնոմ, տըեսնում շախպըերը հուր-

թան կախ իլածք, լոր ա տամ փռնում, ծիթյ տամ, ասում.—Հոր ը՞ս  
օզում հոկրթավը տոնս կյան փախնիս, քյեցալ ըմ կըռքընընես  
սրալ, վըեր կյամ քեզ տորեմ: Վըեր շըլվարան ծիթյ ա տամ,  
պտառվում ա, մոխըերին աշկըերը տընոնում, շաղվում, ըշկըերավն  
ինում, աշկըերը հըղղըղորում, ախաղըերը մին խիլլա տըեղ էլ ա  
փախնում:

Քվորը ըշկըերեն ցավը վըեր անց ա կենում, վազ ա տամ,  
թյինամ ախաղորը հըսնում, ախաղըերն էլ վազ ա տամ, տըեսնում  
ըուաշին իրեր ծըրանի ծառ Պիցրանհնմ ա էտ ծըռքերան մինց,  
թուրը կյամ ա տրա տակորեն կուրծկործում: Վըեր մազ ա մնամ  
թա ծառը պուր կյա վըեր ինգիի, լոր ա տամ եր ինում էն մին  
ծառը: Թուրն էտ մին ծառն էլ վըեր կուրծկործում ա, օզում ա թա  
վըեր ինգիի, կաթնը պրանդում ա, պըռզվնըեն Զանգիին նան Զի-  
րանգիին պեց ըն թողում, փրփրած կյամ ըն հըսնում, տղան թա՝  
Զանգիի-Զիրանգիի, տրան հունց հոփ տուվլեթյ, հունց կոլ տուվլ-  
եթյ, վըեր մին տոպ արուն կաթի: Էրկու շնըերը յիրա լըն տըեռ-  
նում, էտ ըխնըկանը հունց հոփ տամ, հունց կոլ տամ, վըեր մին  
տիրելու յիրա մենակ մին տոպ արուն ա կաթիւմ: Տղան էտ տիրելը  
յոր ա օնում տինում ծոցումը, շնըերը հետան քցնիմ, հղբ ինում:

Թյինամ ա, թյինամ, տըեսնում մին քանի մարթ ուրանց  
թուլ վըխճըրնըերավ, իծերավ, օրիշ հիյվլննըերավ քշնիմ, տա-  
նում ըն, տըհանցա մինին ծըեռքըեն էլ մին մհակ ա ինում, էտ  
տղըեն ասում ա.—Թա վըեր գյիղաս էս մհակը հինչի յա, էտ ապ-  
րանքը լոխ քե լըմ տամ: Տղան կարում չի ասցե, էտ ծուցըեն  
տիրել թա՝ ճըռ, ճըռ, տղան էլ ասում ա.—Ճըռ-ճապկե-  
թըրըղի: էտ մարթը թա՝ հա՛, տի յա: Ապրանքը լոխ տամ ա էտ  
տղըեն, էտ տղան էլ առաջն ա անում, տանում պըռզվնըերեն  
կոշտը:

